

Հաստատված է՝  
ՈՊԵԿ-ՀԴՄ-002 ծածկագրով մրցույթի  
մրցութային հանձնաժողովի  
2010 թվականի մայիսի 25-ի  
N1 որոշմամբ

**ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԿԱՐԱԿՆԵՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ**  
**ԺԱՊԱՎԵՆՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՈՒ ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ**  
**ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն հայտարարում է հսկիչ-դրամարկային մեքենաների ժապավենների իրացման ու հատուկ համարների միասնական հաշվառման համակարգչի վարման հրապարակային մրցույթ (ծածկագիրը՝ ՊԵԿ-ՀԴՄ-002): Մրցույթին կարող է մասնակցել մրցույթի հրավերով ներկայացվող որակավորման չափանիշներին բավարարող՝ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված առևտրային կազմակերպությունը կամ օտարերկրյա պետությունում ստեղծված առևտրային կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած մասնաձյուղը: Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությանը կտրվի 2010 թվականից սկսած ՀԴՄ կտրոնների հատուկ համարներով վիճակահանության անցկացման ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ՀԴՄ շահագործողներին ՀԴՄ ժապավենների իրացման և հատուկ համարների միասնական հաշվառման համակարգի վարման երաշխավորագիր՝ 1-ից 3 տարի ժամկետով: Մրցույթում հաղթող ճանաչված անձի հետ կկնքվի գրավոր պայմանագիր:

Մրցույթի հրավերի ծանոթանալու և հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, մրցութային հանձնաժողով՝ ք.Երևան Խորենացու 72. (հեռ.՝ 594614, 594645) կամ այցելել հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայք ( [www.taxservice.am](http://www.taxservice.am)):

Մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 15.06.2010թ. ժամը 1800: Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել մրցութային հանձնաժողով՝ ք. Երևան Խորենացու 7 հասցեով: Ներկայացված հայտերի բացումը կկատարվի մրցութային հանձնաժողովի նիստում՝ 17.06.2010թ. ժամը 1100-ին, ք. Երևան, Խորենացի 7 հասցեում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՑՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**  
**ՄՐՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՀՐԱՎԵՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՄԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ  
ԺԱՊԱՎԵՆՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՈՒ ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ**

Հարգելի հայտատու.

Նախքան մրցույթի հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող մրցույթի հայտերը ենթակա են մերժման

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հայաստանի Հանրապետությունում հսկիչ-դրամարկղային մեքենաների ժապավենների իրացման ու հատուկ համարների միասնական հաշվառման համակարգի վարման «ՊԵԿ-ՀԴՄ-001» ծածկագրով անցկացվող մրցույթի հրապարակային ծանուցման, հրապարակված «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և տեղադրված հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում ([www.taxservice.am](http://www.taxservice.am)): Մրցույթի հրավերի ծանոթանալու և հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, մրցութային հանձնաժողով՝ ք.Երևան Խորենացու 72. (հեռ.՝ 594614, 594645): Մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 15.06.2010թ. ժամը 1800: Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել մրցութային հանձնաժողով՝ ք. Երևան Խորենացու 7 հասցեով: Ներկայացված հայտերի բացումը կկատարվի մրցութային հանձնաժողովի նիստում՝ 17.06.2010թ. ժամը 1100-ին, ք. Երևան, Խորենացի 7 հասցեում:

Սույն հրավերը կազմվել է հրապարակային մրցույթի անցկացման մասին ՀՀ օրենսդրությանը, վիճակնության անցկացմանը և ՀԴՄ ժապավեններին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից հաստատված մրցույթի անցկացման կարգին համապատասխան և նպատակ ունի մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց տեղեկացնելու մրցույթին մասնակցելու համար հայտի պատրաստման, պահանջվող փաստաթղթերի և մրցութային առաջարկների ներկայացման, մրցույթի պայմանների, մրցույթի անցկացման, մրցույթում հաղթողին որոշելու, երաշխավորագիր տալու և պայմանագիր կնքելու սահմանված կարգին, ինչպես նաև օժանդակելու մրցույթի հայտը պատրաստելիս:

Մրցութին կարող է մասնակցել սույն հրավերում նշված որակավորման չափանիշներին բավարարող՝ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված առևտրային կազմակերպությունը կամ օտարերկրյա պետություններում ստեղծված առևտրային կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած մասնաճյուղը:

Սույն մրցույթի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն մրցույթի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետությունում ՀԴՄ-ների շահագործման համար կիրառվող ժապավենները պետք է բավարարեն կոմիտեի կողմից հաստատված՝

1.1. ՀԴՄ ժապավենի թղթի տեխնիկական և որակական բնութագրերին ներկայացվող պահանջներին.

1.2. ՀԴՄ ժապավենի թղթի պաշտպանվածության աստիճաններին ներկայացվող պահանջներին.

1.3. ՀԴՄ ժապավենների դարձերեսներին հատուկ համարների տեղադրման պահանջներին:

2. Մրցույթում հաղթող ճանաչված և կոմիտեի կողմից երաշխավորված կազմակերպությունն իրականացնելու է՝

2.1. կոմիտեի հաստատած պահանջներին համապատասխանող ՀԴՄ ժապավենների սպագրումը և (կամ) ներմուծումն ու իրացումը Հայաստանի Հանրապետությունում ՀԴՄ-ներ շահագործողներին.

2.2. հատուկ համարների հաշվառման միասնական համակարգի վարումը ՀԴՄ ժապավենների և դրանց հատուկ համարների միասնական հաշվառման համակարգչային ծրագրային փաթեթով.

2.3. կոմիտեի հաստատած կարգով ու ժամկետներում ՀԴՄ ժապավենների շարժի, իրացման բաշխվածության, մնացորդների վերաբերյալ և այլ անհրաժեշտ տեղեկությունների փոխանակումը կոմիտեի հետ:

3. Երաշխավորված կազմակերպությունը երաշխավորման ժամանակահատվածում չի գերազանցելու մրցույթի մասնակցության հայտով ներկայացրած՝ Հայաստանի Հանրապետությունում ՀԴՄ ժապավենների իրացման իր գնային առաջարկը:

## II. ՀՄԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԺԱՊԱՎԵՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ՀԴՄ-ների ժապավենների տեխնիկական և որակական բնութագրերին ներկայացվող պահանջներն են.

1) ՀԴՄ ժապավենների թուղթը պետք է բավարարի հետևյալ տեխնիկական և որակական բնութագրերին՝

ա. ՀԴՄ ժապավենի թուղթը պետք է լինի թերմոգրաֆիկ (ջերմագրվող), սպիտակ գույնի, հետևյալ տեխնիկական բնութագրերով.

Ժապավենի թղթի տեխնիկական բնութագրերը	Չափը	Չափման միավորը
Թղթի հիմնական քաշը	55±4	գ/մ <sup>2</sup>
Թղթի հաստությունը	60±5	միկրոն
Թղթի սահունությունը	> 400	վայրկյան

Թղթի պայծառությունը (R 457)	92±4	տոկոս (%)
Թղթի առաձգականությունը (md)	51±8	N/15 մմ
Թղթի առաձգականությունը (cd)	29±7	N/15 մմ
Թղթի անթափանցելիությունը	87±2	տոկոս (%)

բ. ՀԴՄ ժապավենի թուղթը պետք է բավարարի հետևյալ որակական բնութագրերին.

<b>Ժապավենի թղթի որակական բնութագրերը.</b>			
Տպման արագությունը	Առավելագույնը՝ 200 մմ 1 վայրկյանում		
Տպված տեքստի կամ պատկերի պահպանման տևողությունը	Նվազագույնը՝ 3 տարի		
<b>Ժապավենի թղթի դիմացկունությունը բնակլիմայական ազդեցությունների նկատմամբ</b>			
Ցուցանիշը	Պայմանը	Պատկերի դիմացկունությունը	Կոնտրաստը
Ջերմադիմացկունությունը	60°C/24ժամ	>76%	>72%
Դիմացկունությունը խոնավության նկատմամբ	40°C/90% հարաբերական խոնավություն/24 ժամ	100%	>99%
Դիմացկունությունը լույսի նկատմամբ	5000լյուքս/100ժ	>90%	>90%
<b>Ժապավենի թղթի դիմացկունությունը արտաքին քիմիական ազդեցությունների նկատմամբ</b>			
Ցուցանիշը	Պայմանը	Պատկերի կայունությունը	
Կենդանական յուղով ձեռքի քսուկ	24ժ, սենյակային ջերմաստիճան	>10%	
Էթանոլ (25 ծավալ %)	24ժ, սենյակային ջերմաստիճան	>70%	
Պլաստիֆիկատոր («Թեսա Գրաֆիկ 57410»)	24ժ, սենյակային ջերմաստիճան	>12%	
Ջուր	24ժ, սենյակային ջերմաստիճան	>75%	

2) ՀԴՄ ժապավենները պետք է ունենան պաշտպանվածության հետևյալ աստիճանները՝

ա. դիմային մասի երկայնքով պետք է տեղադրված լինի միագույն նախշանկարով խորքային ֆոնային ցանց (գիլիոշիբային ֆոն),

բ. դիմային մասի երկայնքով պետք է տեղադրված լինի միայն խոշորացման դեպքում ամբողջությամբ ընթեռնելի միկրոշրիֆտով տպագրված՝ «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե» բառերը՝ հայերեն, ընթեռնելի տառաձևով: Միկրոշրիֆտի տառերի առավելագույն չափը պետք է լինի 200 մկմ,

գ. դիմային մասի եզրագծերի միջև պետք է տեղադրված լինի Հայաստանի Հանրապետության հարկային մարմնի տարբերանշանը: Տարբերանշանի գույնը պետք է

պարունակի այնպիսի ներկ, որն ամբողջությամբ տեսանելի կլինի միայն ուլտրամանուշակագույն լույսի ներքո,

դ. ժապավենի թղթի հետ պետք է ինտեգրված լինեն պաշտպանիչ մանրաթելեր:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում ՀԴՄ կտրոնների հատուկ համարների միջոցով վիճակահանություն (այսուհետ՝ վիճակահանություն) անցկացնելու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ՀԴՄ-ների կտրոնների տրամադրման համար կիրառվող ժապավեններին ներկայացվող պահանջներն են՝

1) ՀԴՄ ժապավենները պետք է բավարարեն սույն հրավերքով նախատեսված տեխնիկական և որակական բնութագրերին, պետք է ունենան պաշտպանվածության աստիճանները.

2) ՀԴՄ ժապավենի դիմային մասն ամբողջ երկայնքով պետք է ունենա միմյանցից 60-ից մինչև 80 մմ հեռավորությամբ հորիզոնական դիրքով տպագրված եզրագծեր (կտրոնի կտրման գծեր): Ժապավենի դարձերեսին պետք է տեսանելի գույնով, հորիզոնական դիրքով տպագրված լինեն հատուկ համարներ՝ ութ արաբական կամայական թվանշաններից կազմված չկրկնվող համակցություններ: Հատուկ համարները պետք է տպագրված լինեն ժապավենի եզրագծերի միջնամասում՝ դարձերեսի վրա, իրարից հավասար հեռավորությամբ, 3-ից մինչև 6մմ բարձրության տառաչափերով.

3) ՀԴՄ ժապավենի դարձերեսի հատուկ համարներին կից, հայերեն մեծատառ, ընթեռնելի տառաձևով պետք է տպագրված լինեն տեսանելի գույնով երկնիշ սերիաներ՝ 3-ից մինչև 6մմ բարձրության տառաչափերով: Ժապավենների դարձերեսի սերիաների շարքը տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն: Ժապավենների յուրաքանչյուր հերթական սերիայով հատուկ համարներ կարող են տպագրվել, եթե նախորդ սերիայով տպագրվել են հատուկ համարների բոլոր հնարավոր (00000000-99999999) համակցությունները.

4) ՀԴՄ ժապավենի դարձերեսի յուրաքանչյուր հատուկ համարին կից՝ տեսանելի գույնով, հայերեն, ընթեռնելի տառաձևով, 3-ից մինչև 8մմ բարձրության տառաչափերով պետք է տպագրված լինի հետևյալ տեքստը.

«Պահանջեք կտրոնը և Դուք՝

- կմասնակցեք պետական եկամուտների համալրմանը,
- կպաշտպանեք Ձեր՝ որպես սպառողի շահերը,
- վիճակահանության արդյունքում կարող եք շահել հինգ հազար դրամից մինչև հինգ միլիոն դրամ:

Վիճակահանությունը կկայանա հաջորդ ամսվա հինգերորդ աշխատանքային օրը:»:

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի «Հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարզևավձարների տրամադրման կարգը հաստատելու մասին» N1330-Ն որոշմամբ սահմանված գործունեության տեսակների մասով կիրառվող ՀԴՄ ժապավենները, բացի սույն պահանջների 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված պահանջների, իրենց դարձերեսի աջ և ձախ կողմերում պետք է ունենան մանր շեղ գծերով չընդհատվող կապույտ եզրաշերտեր, իսկ սույն պահանջների 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված երկնիշ սերիան և 4-րդ ենթակետում նշված տեքստը պետք է տպագրված լինեն կապույտ գույնով:

3. Վիճակահանության անցկացման ժամանակահատվածում ՀԴՄ ժապավենների

փաթեթավորմանը ներկայացվող պարտադիր պահանջներն են՝

1) ՀԴՄ ժապավենները պետք է լինեն գլանափաթեթավորված: Յուրաքանչյուր գլանափաթեթի համար օգտագործվող ժապավենի երկարությունը պետք է լինի 24-ից մինչև 30մ, ժապավենի լայնությունը պետք է լինի երկու չափերի՝ 44±1մմ և 57±1մմ: Գլանափաթեթի տրամագիծը չպետք է գերազանցի 50մմ-ը: Գլանափաթեթի միջուկի նվազագույն ներքին տրամագիծն է 12 մմ.

2) յուրաքանչյուր գլանափաթեթ պետք է ունենա նույնականացման միջոց: Գլանափաթեթները պետք է լինեն որոշակի քանակներով խմբավորված, փաթեթավորված և տարայավորված:

### III. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

#### 1. Ընդհանուր դրույթներ.

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել մրցույթի հայտ: Մրցույթի համար հայտը սույն հրավերով նախատեսված կարգով մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և ներկայացված փաստաթղթերի փաթեթն է (ներառյալ մրցութային առաջարկը), որը ներկայացվում է հայտատուի մրցույթին մասնակցելու առաջարկով (հավելված N1):

#### 2. Հայտատուի որակական չափանիշները հավաստող փաստաթղթերը.

2.1. Մրցույթին մասնակցելու որակավորման իր չափանիշները հավաստելու համար հայտատուն ներկայացնում է պետական գրանցման վկայականի (ներառյալ բոլոր ներդիրների) պատճենի նոտարական կարգով վավերացված օրինակը, ինչպես նաև իր կողմից հաստատված՝ ստորագրված ու կնքված հայտարարություն (հավելված N2), որին կցվում են հետևյալ փաստաթղթերը.

1) հայտատուի կողմից կազմված տեղեկանք այն մասին, որ ունի թերմոգրաֆիկ (ջերմագրվող) թղթի (այդ թվում՝ պաշտպանվածության աստիճաններով) տպագրության մասնագիտական կարողություններ, տեխնիկական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ, եթե հայտատուն նախատեսում է ինքնուրույն պատրաստել ՀԴՄ ժապավենները: Տեղեկանքին կցվում են նաև սույն ենթակետում նշված մասնագիտական կարողությունները հավաստող փաստաթղթեր (պայմանագրեր, համապատասխանության հավաստման սերտիֆիկատներ և այլն), տեխնիկական միջոցների և դրանց տեխնիկական հնարավորությունների նկարագիրը, առկա աշխատանքային ռեսուրսների մասին տեղեկանք (նշելով յուրաքանչյուր մասնագետի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, աշխատանքային փորձը, մասնագիտական կրթությունը և հայտատուի մոտ աշխատանքի սկիզբը, կցելով մասնագետների դիպլոմի, աշխատանքային գրքույկի և գործատուի հետ կնքված պայմանագրերի պատճենները՝ ստորագրված և կնքված հայտատուի կողմից),

2) հայտատուի կողմից տեղեկանք այն մասին, որ ներմուծման համար նախատեսում է պատվիրել ՀԴՄ ժապավեններին ներկայացվող պահանջներին բավարարող թերմոգրաֆիկ (ջերմագրվող) թղթի (այդ թվում՝ պաշտպանվածության միջոցներով) տպագրության մասնագիտական կարողություններ ունեցող կազմակերպությանը, որին կցվում են այդ կազմակերպության մասնագիտական կարողությունները հավաստող փաստաթղթեր (պայմանագրեր, համապատասխանության հավաստման սերտիֆիկատներ և այլն):

3) հայտատուի կողմից կազմված տեղեկանք այն մասին, որ ունի համակարգչային ծրագրային փաթեթերի ներդրման մասնագիտական կարողություններ, եթե հայտատուն նախատեսում է ինքնուրույն մշակել ու ներդնել պահանջվող ծրագրային փաթեթը: Տեղեկանքին կցվում են նաև սույն ենթակետում նշված մասնագիտական կարողությունները հավաստող փաստաթղթեր (պայմանագրեր, համապատասխանության հավաստման սերտիֆիկատներ և այլն), առկա աշխատանքային ռեսուրսների մասին տեղեկանք (նշելով յուրաքանչյուր մասնագետի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, աշխատանքային փորձը, մասնագիտական կրթությունը և հայտատուի մոտ աշխատանքի սկիզբը, կցելով մասնագետների դիպլոմի, աշխատանքային գրքույկի և գործատուի հետ կնքված պայմանագրերի պատճենները՝ ստորագրված և կնքված հայտատուի կողմից),

4) հայտատուի կողմից տեղեկանք այն մասին, որ նախատեսում է պահանջվող ծրագրային փաթեթը պատվիրել նման մասնագիտական կարողություններ ունեցող կազմակերպությանը, որին կցվում են այդ կազմակերպության մասնագիտական կարողությունները հավաստող փաստաթղթեր (պայմանագրեր, համապատասխանության հավաստման սերտիֆիկատներ և այլն),

5) հայտատուի կողմից ներկայացված գնային առաջարկի գնագոյացման հաշվարկով ժապավենի ինքնարժեքին համապատասխան հաշվարկված՝ ժապավենների հատուկ համարների 00000000-99999999 համակցությունները ներառող մեկ խմբաքանակի գլանափաթեթների պատրաստման կամ ներմուծման համար բավարար սեփական կամ փոխառու միջոցների առկայության մասին տեղեկանք: Տեղեկանքին կցվում են հայտը ներկայացնելու նախորդ աշխատանքային օրվա դրությամբ հայտատուի բանկային հաշվում առկա դրամական միջոցների կամ բացված վարկային գծի առկա չափի մասին բանկի կողմից կնքված ու ստորագրված տեղեկանք կամ քաղվածք հայտատուի բանկային հաշվից:

6) տեղեկանք համապատասխան դատարանից մասնակցի անվճարունակ ճանաչված չլինելու մասին, որը տրամադրվել է մրցույթի հայտարարության հրապարակման օրվանից մինչև մրցույթի հայտը ներկայացնելու պահը,

7) հայտատուին հաշվառող հարկային մարմնի կողմից տեղեկանք մրցույթի հայտը ներկայացնելու օրվան նախորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ՀՀ հարկային և պարտադիր վճարների գծով ժամկետանց պարտավորություններ չունենալու մասին, որը տրամադրվել է մրցույթի հայտարարության հրապարակման օրվանից մինչև մրցույթի հայտը ներկայացնելու պահը,

8) 2009 թվականի ֆինանսական հաշվետվությունների պատճենները և շահութահարկի հաշվարկը՝ հարկային տեսչություն ներկայացրած ֆինանսական հաշվետվություններին և շահութահարկի հաշվարկին համապատասխանության մասին գրառումով, ստորագրված ու կնքված հայտատուին հաշվառող հարկային տեսչության կողմից (բացառությամբ ընթացիկ տարում ստեղծված, ինչպես նաև այն կազմակերպությունների, որոնց համար ֆինանսական հաշվետվությունների ձևերի ներկայացումը ՀՀ օրենսդրությամբ պարտադիր չէ),

2.2. Մրցույթի հայտում ներառվող՝ մասնագետների աշխատանքային գրքույկների և դիպլոմների պատճենները, տեխնիկական միջոցների, սարքերի, սարքավորումների վերաբերյալ փաստաթղթերը, մրցույթի մասնակցության որակական չափանիշներին հայտատուի համապատասխանությունը հավաստող պայմանագրերը, համապատասխանության հավաստման սերտիֆիկատները կարող են լինել նաև ռուսերեն

կամ անգլերեն լեզուներով:

2.3. Հայտում ներառված բոլոր փաստաթղթերը, որոնք կնքվում և ստորագրվում են հայտատուի կողմից, ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք պահանջվում են կնքված և ստորագրված լինեն տրամադրողի կողմից՝ պետք է կնքված և ստորագրված լինեն բնօրինակով, բացառությամբ նոտարական վավերացում ստացած պատճենների:

### 3. Մրցութային առաջարկը.

#### 3.1. Մրցութային առաջարկը պետք է ներառի՝

1) մրցութային հրավերով ներկայացված պահանջներին բավարարող ՀԴՄ ժապավենի թղթի տեխնիկական և որակական բնութագրերի առաջարկը (հավելված N3), որին պետք է կցվեն ՀԴՄ կտրոնի էսքիզային առաջարկը և (կամ) փորձնական տպագրված ժապավենային նմուշը: Ժապավենի թղթի տեխնիկական և որակական բնութագրերի հիմնավորման համար ներկայացվում են նաև դրանց համապատասխանությունը հավաստող միջազգային ԻՍՕ ստանդարտների համապատասխան նշագրերը (առկայության դեպքում).

2) մրցութային հրավերով ներկայացված պահանջներին բավարարող ՀԴՄ ժապավենի պաշտպանվածության աստիճանների առաջարկվող նկարագիրը (հավելված N4),

3) մրցութային հրավերով ներկայացված պահանջներին բավարարող ՀԴՄ ժապավենների փաթեթավորման առաջարկվող նկարագիրը (հավելված N5),

4) օրացուցային տարվա յուրաքանչյուր ամսվա կտրվածով ՀԴՄ ժապավենների պատրաստման և (կամ) ներմուծման հնարավոր քանակների վերաբերյալ կանխատեսումներ.

5) ՀԴՄ ժապավենների հատուկ համարների հաշվառման միասնական համակարգի վարման համակարգչային ծրագրային փաթեթի մանրամասնեցված տեխնիկական նկարագիրը, համակարգչային ծրագրային փաթեթի մշակման ու ներդրման առաջարկվող ժամանակացույցը.

6) կոմիտեի հետ ՀԴՄ ժապավենների շարժի, իրացման բաշխվածության, մնացորդների վերաբերյալ և այլ անհրաժեշտ տեղեկությունների փոխանակման համար առաջարկվող համակարգի տեխնիկական նկարագիրը.

7) Հայաստանի Հանրապետության տարածքում (ըստ մարզերի) ՀԴՄ ժապավենների իրացման համար նախատեսվող մատակարարման կամ վաճառքի վայրերի (կետերի) քանակի, դրանց տեղաբաշխման ու տեխնիկական հագեցվածության վերաբերյալ առաջարկ.

8) Հայաստանի Հանրապետությունում ՀԴՄ շահագործողներին ժապավենների (գլանափաթեթների) գնագոյացման հաշվարկը և իրացման առավելագույն գնային առաջարկը (ներառյալ ավելացված արժեքի հարկը):

#### 4. Մրցույթի հայտը պատրաստելու կարգը

4.1. Պահանջվող փաստաթղթերը և առաջարկները դրվում են ծրարի մեջ, որը ստանձվում է և կնքվում: Փաստաթղթերի փաթեթները (ծրարները) պետք է կազմված լինեն բնօրինակից և երկու օրինակ պատճեններից, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճե» բառերը: Բնօրինակ փաթեթում ներառված բոլոր պատճեն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը պետք է կնքված և ստորագրված լինեն հայտատուի կողմից: Ծրարները և հրավերով նախատեսված՝ հայտատուի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս կողմից լիազորված անձը: Եթե մրցույթի հայտը ներկայացնում է լիազորված անձը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին

փաստաթուղթ: Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են մրցույթի հայտերն ուղարկել պատվիրված նամակով կամ հանձնել առձեռն: Ծրարների վրա մրցույթի հայտը կազմելու լեզվով կատարվում են հետևյալ գրառումները.

- 1) մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն).
- 2) մրցույթի ծածկագիրը՝ «ՊԵԿ-ՀԴՄ-002» .
- 3) «չբացել մինչև 17.06.2010թ. ժամը 1100 « բառերը,
- 4) հայտատուի անվանումը, գտնվելու վայրը (հասցեն) և հեռախոսահամարները:

Մրցույթի մասնակիցները, մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը՝ 15.06.2010թ. ժամը 1800, կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտերը: Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ ծրարի վրա ավելացնելով նաև «փոփոխում» բառը:

4.2. Սույն բաժնի 4-րդ կետի 4.1-րդ ենթակետի պահանջներին չհամապատասխանող, ինչպես նաև հայտեր ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո տրված հայտերը մերժվում են և վերադարձվում են ներկայացնողին՝ դրանք ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

#### IV. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

1. Ներկայացված հայտերի բացումը կկատարվի մրցութային հանձնաժողովի նիստում՝ 17.06.2010թ. ժամը 1100-ին, ք. Երևան, Խորենացի 7 հասցեում: Մրցույթի հայտերի բացման նիստում հրապարակվում են հայտ ներկայացրած յուրաքանչյուր հայտատուի անվանումը, տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ սույն հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ, տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ, տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու վերաբերյալ, տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների վերաբերյալ:

2. Մրցույթի հայտերի բացման նիստում մրցույթի հանձնաժողովը գնահատում է՝

1) մրցույթի հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սույն հրավերով սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը պարունակող ծրարները.

2) բացված յուրաքանչյուր ծրարում մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը.

3) յուրաքանչյուր մասնակցի որակավորման հատկանիշները հավաստող փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պայմաններին:

Սույն կետով նախատեսված գնահատման արդյունքում անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում հանձնաժողովը մերժում է այդ հայտերը: Եթե առկա է անհամապատասխանություն հայտատուի ներկայացրած հայտի բնօրինակի և պատճենների միջև, ապա հանձնաժողովի կողմից գնահատման համար հիմք է ընդունվում տվյալ հայտի բնօրինակը: Մերժված հայտերի պատճենները հետ են վերադարձվում դրանք ներկայացրած անձանց՝ մրցույթի հայտերի բացման նիստին հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում: Հայտատուները և (կամ) նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի նիստին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ

աշխատանքային օրվա ընթացքում: Մրցույթի հայտերի բացման նիստի օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի հայտերի բացման արձանագրության պատճենները տրամադրվում են այն հայտատուներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել նիստին:

3. Հանձնաժողովի նախագահը հրապարակում է նախատեսված տեղեկությունները և մրցույթի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով հրավիրվող նիստի օրը, ժամը և նիստը հայտարարում է փակված: Մրցույթի հայտերը հանձնաժողովի կողմից գնահատվելուց հետո քարտուղարը չմերժված մրցույթի հայտերի բնօրինակները առանձնացնում է և հանձնաժողովի անդամների ներկայությամբ գույքագրում դրանք:

4. Հանձնաժողովը մրցույթի հայտերը բացելուց հետո կազմում է արձանագրություն, որը ստորագրում են մրցույթի հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

1) տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները.

3) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) մրցույթը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

6) տեղեկատվություն՝ մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխանների մասին.

7) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

8) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

9) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

## **V. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ**

1. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ մասնակիցների առաջարկների ու փաստաթղթերի հիման վրա գնահատում է մրցույթի յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած առաջարկը: Մրցույթի մասնակիցներից նախապատվությունը տրվում է ժապավենի թղթի տեխնիկական և որակական բնութագրերին, ժապավենների պաշտպանվածության աստիճաններին, հատուկ համարների հաշվառմանն ու միասնական համակարգի վարմանը ներկայացվող պահանջներին առավելագույն համապատասխանությամբ և միաժամանակ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին: Եթե առկա է անհամապատասխանություն մասնակցի ներկայացրած առաջարկի բնօրինակի և պատճենների միջև, ապա հանձնաժողովի կողմից գնահատման համար հիմք է ընդունվում տվյալ առաջարկի բնօրինակը:

2. Ժապավենի թղթի տեխնիկական և որակական բնութագրերի, ժապավենների պաշտպանվածության աստիճանների առաջարկներով նախատեսված տվյալներին տրվում են հրավերով նախատեսված պահանջներին «Համապատասխանում է» կամ «Զի համապատասխանում» գնահատականները: «Համապատասխանում է»

գնահատականը տրվում է, եթե մրցույթի հայտով մասնակցի ներկայացրած տվյալները բավարարում են մրցույթի հրավերով այդ տվյալների համար սահմանված նվազագույն պահանջներին: Գնահատումն իրականացվում է նաև մրցույթի հայտով ներկայացված՝ սույն հրավերով նախատեսված բոլոր առաջարկների (այդ թվում՝ գնային) թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը ու դրանց, ինչպես նաև ինքնարժեքի հաշվարկման (թվաբանական) ճշտությունը գնահատելու միջոցով: Ընդ որում, որքան ցածր է առաջարկված գինը, այնքան բարձր է մասնակցի գնահատականը: Թվերով և տառերով արտահայտված տվյալների միջև անհամապատասխանության դեպքում հիմք են ընդունվում տառերով արտահայտված տվյալները : Հաշվարկման (թվաբանական) անճշտությունների դեպքում, հիմք ընդունելով չափման միավորի ցուցանիշները, կատարում է վերահաշվարկ :

3. Ընտրված մասնակցին որոշելու նպատակով, մրցույթի հայտերը ներկայացվելու վերջին օրվանից ոչ ուշ, քան տասն աշխատանքային օրվա ընթացքում հրավիրվում է նիստ: Հրավիրվող նիստում՝

1) հանձնաժողովի քարտուղարը ստացած գնահատման թերթիկները փոխանցում է նախագահին, որը հայտարարում է մրցույթի յուրաքանչյուր անդամի կողմից մրցույթի մասնակիցներին տրված գնահատականները,

2) հանձնաժողովը գնահատման թերթիկների հիման վրա որոշում է ընտրված մասնակցին:

Մինչև հանձնաժողովի կողմից ընտրված մասնակցին որոշելը հանձնաժողովի անդամը կարող է վերանայել իր կողմից ստորագրված գնահատման թերթիկում նշված գնահատականները՝ հանձնաժողովին զրոյամբ ներկայացնելով գնահատման նոր թերթիկ: Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել մրցույթի որակավորված մասնակիցներից բացատրություններ պահանջելու մասին: Բացատրությունները չեն կարող հանգեցնել մրցույթի հայտի կամ առաջարկի բնութագրերի փոփոխությանը: Հանձնաժողովը մրցույթի արդյունքների ամփոփման նիստում հրապարակում է հաղթող ճանաչված մասնակցի անվանումը և հիմնավորում նրա ընտրությունը :

4. Հանձնաժողովը կազմում է մրցույթի արդյունքների մասին արձանագրություն, որտեղ նշում է՝

1) մրցույթի հայտերի ամփոփման վայրը, ամսաթիվը և ժամը, հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

2) մրցույթի մասնակիցների անվանումները և գտնվելու վայրերը.

3) տեղեկություններ՝ մրցույթի մասնակիցների ներկայացրած առաջարկների գնահատման վերաբերյալ.

4) մրցույթում հաղթողի անվանումը.

5) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Մրցույթի մասնակիցները և (կամ) նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի նիստին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Մրցույթի հայտերի ամփոփման նիստի օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի արդյունքների մասին արձանագրության պատճենները տրամադրվում են այն մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել նիստին:

## VI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

1. Մրցութային հանձնաժողովի որոշման հիման վրա կոմիտեն ընտրված մասնակցի հետ կնքում է պայմանագիր: Պայմանագիրը կնքում է գրավոր: Ընտրված մասնակցին հայտարարելուց, երեք աշխատանքային օրվա ընթացքում կոմիտեին ծանուցում է ընտրված մասնակցին՝ նրան ներկայացնելով պայմանագրի նախագիծը: Եթե ընտրված մասնակցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Այդ դեպքում կոմիտեն սահմանված կարգով հայտարարում է նոր մրցույթ կամ կատարում է հաղթողի ընտրությունն մրցույթի այլ մասնակիցներից՝ սույն հրավերով սահմանված պահանջներին բավարարելու պայմանով:

2. Մրցույթների արդյունքները դրա ամփոփմանը հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և տեղադրվում են հարկային մարմնի ինտերնետային կայքում: Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին կոմիտեի կողմից տրվում է երաշխավորագիր մեկից մինչև երեք տարի ժամկետով:

3. Կոմիտեի երաշխավորած կազմակերպության հետ կնքվում է վիճակահանության անցկացման ժամանակահատվածում ՀԴՄ շահագործողներին ժապավենների իրացման ու հատուկ համարների միասնական հաշվառման համակարգի վարման հարցերը կանոնակարգող գրավոր պայմանագիր, որի պարտադիր պայմաններն են՝

1) սահմանված պահանջներին և Հայաստանի Հանրապետությունում շահագործվող ՀԴՄ-ների ժապավենների համար կոմիտեի ներկայացրած պահանջարկին համապատասխան ժապավենների տպագրումը և (կամ) ներմուծումը, ինչպես նաև իրացումը Հայաստանի Հանրապետությունում ՀԴՄ-ներ շահագործողներին:

2) հատուկ համարների հաշվառման միասնական համակարգի վարումը ՀԴՄ ժապավենների և դրանց հատուկ համարների հաշվառման համակարգչային ծրագրային փաթեթով, կոմիտեի հաստատած կարգով ու ժամկետներում ժապավենների շարժի, իրացման կետերի բաշխվածության, մնացորդների վերաբերյալ և այլ անհրաժեշտ տեղեկությունների փոխանակումը կոմիտեի հետ:

3) երաշխավորման ժամանակահատվածում մրցույթի մասնակցության հայտով ներկայացրած՝ Հայաստանի Հանրապետությունում ժապավենների իրացման գնային առաջարկը չգերազանցելը:

## VII. ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

1. Մրցութային հանձնաժողովը չկայացած է համարում մրցույթը, եթե՝

1) ոչ մի հայտ չի ներկայացվել:

2) ներկայացված հայտերից ոչ մեկը չի համապատասխանում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված պահանջներին, ինչպես նաև եթե հայտեր ներկայացնելը չի համապատասխանել սույն հրավերի և մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին:

2. Մրցույթը չկայացած հայտարարվելուց հետո հրապարակվում է հայտարարություն՝ նշելով մրցույթը չկայացած հայտարարվելու հիմնավորումը :

*Հավելված N1*  
*«ՊԵԿ-ՀԴՄ-002» ծածկագրով մրցույթի հրավերի*  
*«ՊԵԿ-ՀԴՄ-002» ծածկագրով մրցույթի*  
*հանձնաժողովին*

**ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿ**

*Մրցույթի հայտատուի անվանումը*

հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու Հայաստանի Հանրապետությունում հարկային վարչարարության օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման ժամանակահատվածում հսկիչ-դրամարկդային մեքենաներ շահագործողներին ժապավենների իրացման և հատուկ համարների միասնական հաշվառման համակարգի վարման ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից հայտարարված «ՊԵԿ-ՀԴՄ-002» ծածկագրով անցկացվող մրցույթին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է մրցույթի հայտը:

Առդիր \_\_\_\_\_ թերթ:

\_\_\_\_\_  
*հայտատուի անվանումը, ղեկավարի անունը, ազգանունը, պաշտոնը*

\_\_\_\_\_  
*ստորագրությունը*

\_\_\_\_\_  
*ամսաթիվը, ամիսը* 20...թ.

*Կ.Տ.*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

---

*Մրցույթի հայտատուի անվանումը*

հ ա յ տ ա ր ա ր ու մ է, որ.

- ունի ՀԴՄ ժապավեններին ներկայացվող պահանջներին բավարարող թերմոգրաֆիկ (ջերմագրվող) թղթի (այդ թվում՝ պաշտպանվածության միջոցներով) տպագրության մասնագիտական կարողություններ, տեխնիկական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ, կամ

*կատարել ✓ նշումը*

- ներմուծման համար նախատեսում է ՀԴՄ ժապավենները պատվիրել ներկայացվող պահանջներին բավարարող թերմոգրաֆիկ (ջերմագրվող) թղթի (այդ թվում՝ պաշտպանվածության միջոցներով) տպագրության մասնագիտական կարողություններ ունեցող կազմակերպությանը:

*կատարել ✓ նշումը*

- ունի համակարգչային ծրագրային փաթեթների ներդրման մասնագիտական կարողություններ և աշխատանքային ռեսուրսներ, կամ

*կատարել ✓ նշումը*

- պահանջվող ծրագրային փաթեթը նախատեսում է պատվիրել դրա ներդրման մասնագիտական կարողություններ ունեցող կազմակերպությանը:

*կատարել ✓ նշումը*

- հրավերով նախատեսված խմբաքանակի պատրաստման համար ունի բավարար սեփական կամ փոխառու միջոցներ, կամ

*կատարել ✓ նշումը*

- հրավերով նախատեսված ժապավենների խմբաքանակի ներմուծման համար ունի բավարար սեփական կամ փոխառու միջոցներ:

*կատարել ✓ նշումը*

- ❖ դատական կարգով լինի անվճարունակ ճանաչված չէ, լուծարման գործընթացում չի գտնվում, արգելանքի տակ չունի պայմանագրի կատարման համար հայտով ներկայացրած գույք:
- ❖ մրցույթի հայտը ներկայացնելու օրվան նախորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր՝ ՀՀ հարկային և պարտադիր վճարների գծով:
- ❖ ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝
  - դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
  - գնման պայմանագրի կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,
  - իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

\_\_\_\_\_  
*հայտատուի անվանումը, ղեկավարի անունը, ազգանունը, պաշտոնը*

\_\_\_\_\_  
*ստորագրությունը*

\_\_\_\_\_  
*ամսաթիվը, ամիսը* 20...թ.

*Կ.Տ.*

**ՀԴՄ ԺԱՊԱՎԵՆԻ ԹՂԹԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ  
ԱՌԱՋԱՐԿ**

Ժապավենի թղթի տեխնիկական բնութագրերը	Չափը	Չափման միավորը
Թղթի հիմնական քաշը		գ/մ <sup>2</sup>
Թղթի հաստությունը		միկրոն
Թղթի սահունությունը		վայրկյան
Թղթի պայծառությունը (R 457)		տոկոս (%)
Թղթի առաձգականությունը (md)		N/15 մմ
Թղթի առաձգականությունը (cd)		N/15 մմ
Թղթի անթափանցելիությունը		տոկոս (%)

Ժապավենի թղթի որակական բնութագրերը.	
Տպման արագությունը	Առավելագույնը՝ .....մմ 1 վայրկյանում
Տպված տեքստի կամ պատկերի պահպանման տևողությունը	..... տարի

Ժապավենի թղթի դիմացկունությունը բնակլիմայական ազդեցությունների նկատմամբ			
Ցուցանիշը	Պայմանը	Պատկերի դիմացկունությունը	Կոնտրաստը
Ջերմադիմացկունությունը	60°C/24ժամ		
Դիմացկունությունը խոնավության նկատմամբ	40°C/90% հարաբերական խոնավություն/24 ժամ		
Դիմացկունությունը լույսի նկատմամբ	5000լուքս/100ժ		

Ժապավենի թղթի դիմացկունությունը արտաքին քիմիական ազդեցությունների նկատմամբ		
Ցուցանիշը	Պայմանը	Պատկերի կայունությունը
Կենդանական յուղով ձեռքի քսուկ	24ժ, սենյակային ջերմաստիճան	
Էթանոլ (25 ծավալ %)	24ժ, սենյակային ջերմաստիճան	
Պլաստիֆիկատոր (“Թեսա Գրաֆիկ 57410”)	24ժ, սենյակային ջերմաստիճան	
Ջուր	24ժ, սենյակային ջերմաստիճան	

\_\_\_\_\_ հայտատուի անվանումը, ղեկավարի անունը, ազգանունը, պաշտոնը

\_\_\_\_\_ ստորագրությունը

\_\_\_\_\_ 20...թ.  
ամսաթիվը, ամիսը

Կ.Տ.

**ՀԴՄ ԺԱՊԱՎԵՆԻ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ  
ՆԿԱՐԱԳԻՐ**

**ՀԴՄ ժապավենները պետք է ունենան պաշտպանվածության հետևյալ աստիճանները՝**

- նախշանկարով խորքային ֆոնային ցանց (գիլիյոշիրային ֆոն)՝  
նկարագիր

---

---

---

- խոշորացման դեպքում ամբողջությամբ ընթեռնելի միկրոշրիֆտ՝  
նկարագիր

---

---

---

- Հայաստանի Հանրապետության հարկային մարմնի տարբերանշանը՝  
նկարագիր

---

---

---

- ժապավենի թղթի հետ ինտեգրված պաշտպանիչ մանրաթելեր՝  
նկարագիր

---

---

---

- առաջարկվող լրացուցիչ պաշտպանվածության աստիճան՝  
նկարագիր

---

---

---

\_\_\_\_\_ հայտատուի անվանումը, ղեկավարի անունը, ազգանունը, պաշտոնը

\_\_\_\_\_ ստորագրությունը

\_\_\_\_\_ 20...թ.  
ամսաթիվը, ամիսը

Կ.Տ.

**ՀԴՄ ԺԱՊԱՎԵՆՆԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ  
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՆԿԱՐԱԳԻՐ**

• ՀԴՄ ժապավենների գլանափաթեթավորում՝  
նկարագիր

---

---

---

---

---

---

---

---

• ՀԴՄ ժապավենների գլանափաթեթների նույնականացման միջոցներ՝  
նկարագիր

---

---

---

---

---

---

---

---

• ՀԴՄ ժապավենների խմբավորում, փաթեթավորում և տարայավորում՝  
նկարագիր

---

---

---

---

---

---

---

---

\_\_\_\_\_ հայտատուի անվանումը, ղեկավարի անունը, ազգանունը, պաշտոնը

\_\_\_\_\_ ստորագրությունը

\_\_\_\_\_ 20...թ.  
ամսաթիվը, ամիսը

Կ.Տ.